ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դավթյան Դիանա Արարատ Ա/Ձ-ն ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/65-Ա ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Բազմոցը պետք է ունենա ամուր և կայուն կարկաս, հարմարավետ փափուկ նստատեղ, մեջքի հենարան և երկու կողային բազկակալ: Բազմոցի կառուցվածքը պետք է ապահովի կայունություն և երկարատև շահագործում: Բազմոցի կարկասը պետք է պատրաստված լինի ամուր և դիմացկուն նյութից՝ փայտից, փայտանյութից, մետաղական տարրերից կամ համարժեք նյութից: Նստատեղը և մեջքի հենարանը պետք է ունենան համապատասխան փափկեցնող լցանյութ՝ ապահովելով հարմարավետ նստելու հնարավորություն և ձևի պահպանումը: Բազմոցի պաստառը պետք է լինի մաշակայուն, որակյալ, կենցաղային օգտագործման համար նախատեսված գործվածքից, հեշտ մաքրվող և պահպանման համար հարմար: Գույնը՝ մոխրագույն կամ մուգ մոխրագույն, հնարավոր է համարժեք երանգով: Պաստառի կարերը պետք է լինեն ամուր և կոկիկ, առանց տեսանելի թերությունների: Բազմոցը պետք է ունենա երկու կողային բազկակալ՝ ամուր և կայուն կառուցվածքով: Ոտքերը կամ հենակները պետք է ապահովեն բազմոցի կայուն դիրքը հատակին և չվնասեն հատակի ծածկույթը: Բազմոցի ընդհանուր երկարությունը պետք է լինի առավելագույնը 2000մմ լայնությունը՝ 800-ից 900մմ, բարձրությունը՝ 780 -1100մմ (±100),: Բազմոցի չափերը պետք է համապատասխանեն նախատեսված տարածքում հարմարավետ տեղադրման և օգտագործման պահանջներին: Այլ պայմաններ. * Ընթացակարգն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի: **Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը, հավաքումը իրականացնում է Մատակարարը: ***Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: ****5-րդ չափաբաժնով նախատեսված հավաքածուի բոլոր բաղադրիչները

	պետք է լինեն միմյանց հետ համատեղելի և ապահովեն կահույքի ամբողջական, անվտանգ և պատշաճ շահագործումը: Ապրանքը չպետք է ունենա մեխանիկական վնասվածքներ, ճաքեր, կոտրվածքներ, դեֆորմացիաներ, մակերեսային էական թերություններ կամ արտադրական այլ խոտաններ: Ապրանքը պետք է մատակարարվի ամբողջական վիճակում՝ հավաքման և շահագործման համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչներով, ամրակներով և պարագաներով: Անհրաժեշտության դեպքում մատակարարը պետք է տրամադրի հավաքման և շահագործման հրահանգը: *****6-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը պետք է լինի ամբողջական, առանց մեխանիկական վնասվածքների, պատռվածքների, բծերի, դեֆորմացիաների կամ այլ տեսանելի թերությունների: Բոլոր կառուցվածքային և ամրացնող տարրերը պետք է լինեն հուսալի և ապահովեն բազմոցի անվտանգ շահագործումը: Բազմոցը պետք է մատակարարվի պատրաստի վիճակում կամ հավաքման համար անհրաժեշտ բոլոր պարագաներով: *******Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Давтян Диана Арарат ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/65-Ա ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	